# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ՅՈՒՆԱՐԷՆ ԲՆԱԳՐԵՐՈՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1981

ՀՐԱՄԱՆԱՒ

## Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

## Տ. ԵՂԻՇԷԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Armenian (Western) NT W 263
© St. James Press Jerusalem, 1981
UBS-EPF 1982-22M

# ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

## ԳԼՈՒԽ Ա.

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

1 Դաւիթի որդի, Աբրահամի որդի՝ Յիսուս Քրիստոսի
ազգաբանութեան գիրքը:
2 Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ ծնաւ Յակոբը.
3 Յակոբ ծնաւ Յուդան եւ անոր եղբայրները. Յուդա ծնաւ
Փարէսը եւ Զարան՝ Թամարէն. Փարէս ծնաւ Եզրոնը.
4 Եզրոն ծնաւ Արամը. Արամ ծնաւ Ամինադաբը. Ամինա-
5 դաբ ծնաւ Նաասոնը. Նաասոն ծնաւ Սաղմոնը. Սաղմոն
ծնաւ Բոոսը՝ Հռաքաբէն. Բոոս ծնաւ Ովբէդը՝ Հռու-
6 թէն. Ովբէդ ծնաւ Յեսսէն. Յեսսէ ծնաւ Դաւիթ արքան:
Դաւիթ ծնաւ Սողոմոնը՝ Ուրիայի կնոջմէն. Սողո-
7 մոն ծնաւ Ռոբովամը. Ռոբովամ ծնաւ Աբիան. Աբիա
8 ծնաւ Ասափը. Ասափ ծնաւ Յովսափատը. Յովսափատ
ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ոզիան. Ոզիա ծնաւ
9 Յովաթամը. Յովաթամ ծնաւ Աքազը. Աքազ ծնաւ
10 Եզեկիան. Եզեկիա ծնաւ Մանասէն. Մանասէ ծնաւ Ա-
11 մովսը. Ամովս ծնաւ Յովսիան. Յովսիա ծնաւ Յեքոնի-
ան եւ անոր եղբայրները՝ բաբելոնեան գերութեան
միջոցին:
12 Բաբելոնեան գերութենէն ետք Յեքոնիա ծնաւ Սա-
13 ղաթիէլը. Սաղաթիէլ ծնաւ Զօրաբաբէլը. Զօրաբաբէլ
14 ծնաւ Աբիուդը. Աբիուդ ծնաւ Եղիակիմը. Եղիակիմ

ծնաւ Ազովրը Ազովր ծնաւ Սադովկը Սադովկ ծնաւ
15 Աքիմը Աքիմ ծնաւ Եղիուդը Եղիուդ ծնաւ Եղիազարը
16 Եղիազար ծնաւ Մատթան Մատթա ծնաւ Յակոբը Յա-
կոբ ծնաւ Յովսէփը՝ Մարիամի ամուսինը, որուն խօ-
սեցեալն էր կոյս Մարիամը*, որմէ ծնաւ Յիսուս, որ
կոչուեցաւ Քրիստոս։
17 Արդ՝ Աբրահամէն մինչեւ Դաւիթ՝ կան տասնչորս
սերունդներ Դաւիթէն մինչեւ բաբելոնեան գերութիւն
տասնչորս սերունդներ եւ Բաբելոնի գերութենէն մին-
չեւ Քրիստոս տասնչորս սերունդներ։

## ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

18 Յիսուս Քրիստոսի ծնունդը տեղի ունեցաւ այսպէս
Մարիամ, որ նշանուած էր Յովսէփի, դեռ անոր հետ
միասին չապրած, Սուրբ Հոգիէն յղացած վիճակի մէջ
19 գտնուեցաւ։ Յովսէփ՝ իր այրը, արդար մարդ, չուզեց
զայն անուանարկել, ուստի խորհեցաւ լռելեայն արձա-
20 կել զայն։ Եւ մինչ ան այսպէս կը մտածէր, ահա Տիրոջ
հրեշտակը տեսիլքի մէջ երեւցաւ անոր եւ ըսաւ. «Յով-
սէ՛փ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախնար քու կինդ՝ Մարիամը
քովդ առնել, որովհետեւ ան՝ որուն մայրը եղած է ան,
21 Սուրբ Հոգիէն է։ Պիտի ծնի որդի մը, եւ անոր անունը
Յիսուս պիտի դնես, որովհետեւ ան պիտի փրկէ իր ժո-
22 ղովուրդը՝ իրենց մեղքերէն»։ Այս ամէնը տեղի ունե-
ցաւ, որպէսզի կատարուի Տիրոջ խօսքը Եսայի մարգա-
23 րէի բերնով ըսուած թէ՝ «Ահա կոյսը պիտի յղանայ եւ
որդի մը պիտի ծնի. եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ
կը թարգմանուի Աստուած մեզի հետ»։

* Հնագոյն յունարէն ձեռագիրները չունին որուն խօսեցեալն էր կոյս Մարիամը բառերը. Յունարէն բնագիր այսպէս է. յուն. բն.։





24 Եւ Յովսէփ արթննալով քունէն՝ կատարեց հրամանը
25 Տիրոջ հրեշտակին եւ քովը առաւ իր կինը, բայց չճանչ-
ցաւ զայն որպէս ամուսին, մինչեւ ան ծնաւ իր անդ-
րանիկ* որդին, զոր անուանեց Յիսուս։

## ԳԼՈՒԽ Բ.

## ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

1 Երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքին
մէջ, Հերովդէս թագաւորի օրով, արեւելքէն մոգեր ե-
2 կան Երուսաղէմ եւ ըսին «Ո՞ւր է Հրեաներու արքան որ
ծնաւ, վասնզի անոր աստղը տեսանք արեւելքի մէջ եւ
3 եկանք անոր երկրպագելու»։ Եւ երբ Հերովդէս արքան
լսեց այս՝ խռովեցաւ եւ անոր հետ՝ ամբողջ Երուսաղէ-
4 մը։ Ժողվելով իր մօտ բոլոր քահանայապետներն ու ժո-
ղովուրդին դպիրները՝ հարցուց անոնց թէ ո՞ւր պիտի
5 ծնէր Քրիստոս։ Եւ անոնք ըսին անոր. «Հրէաստանի
Բեթղեհէմ քաղաքին մէջ, վասնզի այսպէս գրուած է
6 մարգարէին ձեռքով. «Եւ դուն, Բեթղեհէ՛մ, Յուդայի՛
երկիր, փոքրագոյնը չես Յուդայի իշխողներուն մէջ
վասնզի քեզմէ իշխող մը պիտի ելլէ ինծի համար, որ
պիտի հովուէ իմ ժողովուրդս Իսրայէլը»։
7 Այն ատեն Հերովդէս գաղտնի կանչեց մոգերը եւ
8 անոնցմէ ստուգեց աստղին երեւնալուն ժամանակը։ Եւ
զանոնք Բեթղեհէմ ուղարկելով՝ ըսաւ. «Գացէ՛ք ըս-
տոյգ տեղեկութիւններ առէք մանկան մասին, եւ երբ
գտնէք, տեղեակ պահեցէք զիս, որպէսզի ես ալ գամ ու
9 երկրպագեմ անոր»։ Եւ անոնք, երբ թագաւորէն լսեցին
այս, գացին։ Եւ ահա այն աստղը զոր տեսած էին արե-

* Յունարէնը չունի իր անդրանիկ բառերը։

ւելքի մէջ, առաջնորդեց զիրենք, մինչեւ որ եկաւ կե-
ցաւ այն տեղւոյն վրայ, ուր կը գտնուէր մանուկը։
10-11 Երբ աստղը տեսան՝ չափազանց ուրախացան։ Եւ երբ
տունը մտան՝ տեսան մանուկը իր մօրը՝ Մարիամի
հետ, եւ երեսի վրայ իյնալով երկրպագեցին անոր
ապա բանալով իրենց գանձերը՝ անոր մատուցին նուէր-
12 ներ՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս։ Եւ որովհետեւ տեսիլ-
քի մէջ ազդարարութիւն եղած էր իրենց չվերադառնալ
Հերովդէսի մօտ, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։

### ՓԱԽՈՒՍՏ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ

13 Եւ երբ անոնք մեկնեցան՝ նորէն Տիրոջ հրեշտակը
տեսիլքի մէջ երեւցաւ Յովսէփին եւ ըսաւ. «Ելի՛ր, ա՛ռ
մանուկը եւ անոր մայրը ու փախի՛ր Եգիպտոս։ Եւ հոն
մնացիր մինչեւ որ իմացնեմ քեզի. որովհետեւ Հերով-
դէս կը փնտռէ մանուկը՝ կորսնցնելու համար
14 զայն»։ Եւ ան ելաւ, առաւ մանուկը եւ անոր մայրը,
գիշեր ատեն, եւ գնաց Եգիպտոս ու հոն մնաց մինչեւ
15 Հերովդէսի մահը, որպէսզի կատարուի Տիրոջ կողմէ
մարգարէին բերնով ըսուածը թէ՝ Եգիպտոսէ՛ն պիտի
կանչեմ իմ Որդիս։

### ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԿՈՏՈՐԱԾԸ

16 Երբ Հերովդէս տեսաւ թէ խաբուեցաւ մոգերէն,
սաստիկ զայրացաւ եւ մարդ ղրկեց ու կոտորեց Բեթղե-
հէմի եւ անոր սահմաններուն մէջ գտնուող բոլոր մա-
նուկները, որոնք երկու տարեկան էին կամ անկէ վար
նկատի առնելով այն ժամանակը զոր ստուգած էր մո-
17 գերէն։ Ասով կատարուեցաւ Երեմիա մարգարէին բեր-
18 նով ըսուածը թէ՝ Հռամայի մէջ ձայն մը գուժեց որ





ու լաց եւ սաստիկ հեծեծանք. Հռաքէլ կ՚ողբար իր զա-
ւակները եւ մխիթարուիլ չէր կրնար, քանի որ չկային
անոնք այլեւս։

### ՎԵՐԱԴԱՐՁ ԵԳԻՊՏՈՍԷՆ ՆԱԶԱՐԷԹ

19 Երբ Հերովդէս մեռաւ՝ Տիրոջ հրեշտակը տեսիլքի
20 մէջ երեւցաւ Յովսէփին, Եգիպտոսի մէջ եւ ըսաւ. «Ե-
լի՛ր, ա՛ռ մանուկը եւ անոր մայրը ու վերադարձի՛ր
Իսրայէլի երկիրը, վասնզի մեռան անոնք որ այդ ման-
21 կան մահը կ՚ուզէին»։ Եւ Յովսէփ ելաւ, առաւ մանուկը
22 ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը։ Իսկ
երբ լսեց թէ Արքեղայոս թագաւոր եղած է Հրէաստանի
վրայ իր հօրը՝ Հերովդէսի տեղ, վախցաւ այնտեղ եր-
թալէ։ Եւ երազի մէջ հրաման առնելով՝ Գալիլեայի
23 կողմերը գնաց եւ եկաւ բնակեցաւ այն քաղաքը, որ Նա-
զարէթ կը կոչուէր, որպէսզի կատարուի մարգարէնե-
րուն խօսքը թէ՝ Նազովրեցի պիտի կոչուի։

## ԳԼՈՒԽ Գ.

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

1 Այն օրերուն Յովհաննէս Մկրտիչ եկաւ գայ քարո-
2 զելու Հրէաստանի անապատին մէջ՝ ըսելով. «Ապաշխա-
րեցէ՛ք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցած է»։
3 Ասիկա այն էր, որուն մասին Եսայի մարգարէի բերնով
ըսուած էր. «Անապատին մէջ աղաղակողին ձայնն է,
պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամբան եւ հարթեցէ՛ք անոր շա-
ւիղները»։

4 Եւ ինք՝ Յովհաննէս, ուղտի մազէ զգեստ ունէր եւ
մէջքին՝ կաշիէ գօտի. իսկ անոր կերակուրն էր մարախ
5 եւ վայրի մեղր: Անոր կ՚երթային բոլոր Երուսաղէմա-
ցիները, ամբողջ Հրէաստանը եւ Յորդանանի շրջակայքի
6 ժողովուրդը եւ կը մկրտուէին անկէ Յորդանան գետին
7 մէջ ու կը խոստովանէին իրենց մեղքերը: Եւ ան տեսնե-
լով Սադուկեցիներէն եւ Փարիսեցիներէն շատեր, որոնք
եկած էին իր մկրտութեանը, ըսաւ անոնց. «Իժերո՛ւ ծը-
նունդներ, ո՞վ սորվեցուց ձեզի փախչիլ վերահաս բար-
8 կութենէն: Այսուհետեւ ապաշխարութեա՛ն արժանի
9 պտուղ տուէք. եւ մի՛ յաւակնիք դուք ձեզի ըսելու թէ՝
Աբրահա՛մը ունինք մեզի իբրեւ հայր. կ՚ըսեմ ձեզի, որ
Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ
10 յարուցել. որովհետեւ կացինը ահա դրուած է ծառե-
րուն արմատին: Ամէն ծառ, որ բարի պտուղ չի տար,
11 կը կտրուի եւ կրակը կը նետուի: Ես ձեզ ջուրով կը
մկրտեմ ապաշխարութեան համար, բայց ան որ կու գայ
ինծմէ յետոյ, ինծմէ աւելի հզօր է, եւ ես արժանի չեմ
կրելու անոր կօշիկները. ա՛ն պիտի մկրտէ ձեզ Սուրբ
12 Հոգիով եւ հուրով. հեծանոցը իր ձեռքին մէջ է, պիտի
մաքրէ իր կալը ու ցորենը պիտի ժողվէ իր շտեմարանին
մէջ, իսկ յարդը պիտի այրէ անշէջ կրակով»:

## ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

13 Այն ատեն Յիսուս Գալիլեայէն եկաւ Յորդանան,
14 Յովհաննէսէն մկրտուելու: Իսկ Յովհաննէս կ՚արգիլէր
զայն՝ ըսելով. «Ե՛ս պէտք է որ քեզմէ մկրտուիմ, եւ դուն
15 ինծի՞ կու գաս»: Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր.
«Թո՛յլ տուր հիմա, որովհետեւ այսպէ՛ս վայել է որ
մենք կատարենք արդարութեան բոլոր պահանջները»:
16 Եւ ապա թոյլ տուաւ անոր: Եւ երբ Յիսուս մկրտուե-





ցաւ՝ իսկոյն ջուրէն դուրս ելաւ. եւ ահա երկինքը բաց-
ուեցաւ անոր, եւ ան տեսաւ Աստուծոյ Հոգին, որ կ՚իջ-
17 նէր ինչպէս աղաւնի եւ կու գար իր վրայ: Եւ ահա ձայն
մը երկինքէն՝ որ կ՚ըսէր. «Ասիկա՛ է իմ սիրելի որդիս,
որուն ես հաճեցայ»:

## ԳԼՈՒԽ Դ.

## ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

1 Այն ատեն Յիսուս անապատ տարուեցաւ Հոգիէն՝
2 սատանայէն փորձուելու համար: Քառասուն օր ու քա-
3 ռասուն գիշեր ծոմ պահեց, ապա անօթեցաւ: Եւ փորձիչը
մօտենալով անոր՝ ըսաւ. «Եթէ Աստուծոյ որդին ես,
ըսէ՛ որ այս քարերը հաց ըլլան»: Ան պատասխանեց եւ
4 ըսաւ. «Գրուած է թէ՝ միայն հացով չ՚ապրիր մարդ,
այլ այն ամէն խօսքով որ կ՚ելլէ Աստուծոյ բերնէն»:
5 Այն ատեն սատանան զայն տարաւ սուրբ քաղաքը եւ
կանգնեցուց տաճարի աշտարակին վրայ ու ըսաւ անոր.
6 «Եթէ Աստուծոյ որդին ես, քեզ աստի վար նետէ, որով-
հետեւ գրուած է թէ իր հրեշտակներուն պատուէր
տրուած է քեզի համար, եւ անոնք իրենց ձեռքերուն
վրայ պիտի կրեն քեզ, որպէսզի երբեք քու ոտքդ քարին
7 չզարնես»: Յիսուս դարձեալ ըսաւ անոր. «Գրուած է
թէ՝ քու Տէր Աստուածդ պիտի չփորձես»:
8 Սատանան դարձեալ առաւ տարաւ զայն շատ բարձր
լերան մը վրայ եւ ցոյց տուաւ անոր աշխարհի բոլոր
թագաւորութիւնները ու անոնց փառքը եւ ըսաւ անոր.
9 «Այս բոլորը քեզի պիտի տամ, եթէ գետին իյնալով
երկրպագես ինծի»: